Հրա.
Սեթեր. Գրաբար
27 մաս 84
Բարեսիրաց 6
Մոսկվա Բաստրաս
15 մաս
Ս.Խորհ Միություն
Մոսկվայի մարզ
Լուսնոր
Լենինյան - 6 հասցե

...ԿՐԹՕՋԱԽՐ ...ԿԱՆ Է

...ներ: Չորս տարի առաջ պիոներ դպրոցականների պալատը տեղափոխվեց նոր շենք, որտեղ այժմ գործում են գեղարվեստական ու տեխնիկական 200 խմբեր՝ 3 հազար երեխաներով:

Պալատի հոբելյանի առթիվ տեղի ունեցան հանդիսություններ, որոնց ինտերնացիոնալ բարեկամության կենտրոնի հրավերով մասնակցեցին նաև ՌՍՖՍՀ-ի, Ուկրաինայի, Վրաստանի պատվիրակությունները:

Պալատի մանկավարժական կոլեկտիվին ու սաներին ողջունեցին ՀՍՍՀ լուսավորության մինիստրության դաստիարակչական աշխատանքների բաժնի վարիչ Ս. Լևոնյանը, ՀՍՍՀ վաստակավոր ուսուցիչ Ց. Հայկազյանը, տարբեր քաղաքների պիոներական կազմակերպությունների պատվիրակները:

Հանդիսավոր նիստին ներկա էր ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու, կուսակցության Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար Դ. Հարությունյանը:

(Արմենպրես)

ԼՈՒՐԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Մայրաքաղաքի կենտրոնում՝ Սուվորովյան բուլվարում, գտնվում է ճարտարապետական մի կոթող: Մոսկվացիներին այն ծանոթ է որպես «Լունինի տուն», որը կառուցվել է XIX դարում, ճարտարապետ Դոմինիկո Ժիլյարդիի նախագծով:

Այժմ, հիմնովին վերականգնումից հետո, այդ առանձնատունը հանձնվել է Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանին: Եվ ահա թանգարանի նոր շենքը մայիսի 15-ին դռները լայնորեն բացեց մոսկվացիների, մայրաքաղաքի հյուրերի առջև:

Հատկանշական է, որ հենց այդ օրը այստեղ տեղի ունեցավ սովետահայ նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի ցուցահանդեսի բացումը:

Վեց տարի առաջ ՍՍՀՄ նկարչի տանը բացվեց Ռ. Խաչատրյանի անհատական ցուցահանդեսը: Նկարիչն իր ստեղծագործությունների միանգամից գրավեց արվեստասերների ուշադրությունը: Եվ նրանք սպասում էին նոր հանդիպմանը, որովհետև բոլորի համար պարզ էր, որ գործ ունեն ինքնատիպ տաղանդի հետ: Անցած վեց տարիներն ապացուցեցին այդ ճշմարտությունը: Ցուցահանդեսի բացման ժամանակ այդ մասին խոսեցին Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանի դիրեկտոր Ա. Տեսյոլկինը, ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրության կերպարվեստի գլխավոր վարչության պետ Գ. Պոպովը, ՍՍՀՄ նկարիչների միության վարչության առաջին քարտուղար Թ. Սալախովը, սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Դ. Նալբանդյանը, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի դիրեկտոր Հ. Իգիթյանը:

Այնուհետև այցելուները՝ մայրաքաղաքի արվեստի, գիտության գործիչներ, լրագրողներ, դիվանագետներ, ծանոթացան ցուցահանդեսի վեց սրահներում ներկայացված մոտ 100 աշխատանքներին:

Ի՞նչն է հատկանշական Ռ. Խաչատրյանի արվեստին: Դա, անշուշտ, մարդն է՝ իր ողջ բարդ էությամբ ու բնավորության բազմազանությամբ: Ռ. Խաչատրյանը փորձում է ամեն մի կոնկրետ դեպքում թափանցել իր հերոսի հոգու խորքը, գտնել նրա բնավորության բնորոշ գծերը: Նա սիրում է իր հերոսներին: Երբեմն զգում ես նկարչի անբռնազբոս հումորը, երբեմն՝ հեգնանքը, բայց բոլոր դեպքերում ակնհայտ է նկարչի բարությունը, և այդ ամենը Ռ. Խաչատրյանը կարողանում է հաղորդել դիտողին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆՈՌԵԺԻՍՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Մոսկվայի կինոյի կենտրոնական տանը տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի երիտասարդ կինեմատոգրաֆիստների հետ, որոնց հավաքվածներին ներկայացրեց կինոռեժիսոր Է. Վաղարշյանը: Երիտասարդ հայ կինեմատոգրաֆիստներին ողջունեց կինոռեժիսոր Պ. Զուխրայը:

Այնուհետև ցուցադրվեցին «Հայֆիլմում» նկարահանված «Այս տունը», «Մի գիշեր» վավերագրական, «Բնության պրոսակը», «Հեքիաթ ճիշտ ժամացույցների մասին», «Փոքրիկ հողագործը» մուլտիպլիկացիոն ֆիլմերը, ինչպես նաև «Սիրամարգի ճիչը» գեղարվեստական կինոնկարը:

Ալ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
(Մեր սեփ. թղթակից)

ՀԶԳԱՅԻՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ

ՏԱՍՍ ՀԵՌԱՏԻՊԻ ԻԺԱՊԱՎԵՆԻՑ

...ՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԳԻԾԸ

...ով թույլ չտալ, որ տիեզերքը ...ի հենակայանի, կրկին հավաս... ...ագույն ջանքեր գործադրել որ... *սպառնալիքի դեմ հանդիման Սովետական Միությունը հարկադրված կլինի միջոցներ ձեռնարկել ...*

Կ. Ռ. Չեռնենկոյի պատասխանը, գրում է «Նոյես Դոյշլանդ» թերթը (ԳԴՀ) կրկին ամենայն հաստատակամությամբ հայտարարեցինք, որ սպառազինությունների մրցավազքը տիեզերք փոխադրելու նպատակով ԱՄՆ-ի կողմից ձեռ...